ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԱՐՏԱԿ ԲԱՂԻՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 46-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Արտակ Բաղինյանի դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2023 թվականի հունիսի 14-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել Արտակ Բաղինյանի (այսուհետ՝ Դիմող) դիմումը, որով վերջինս խնդրել է.

««Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը, իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 79-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

2. Ներկայացնելով թիվ ՍՆԴ/1247/04/21 սնանկության գործի դատավարական նախապատմությունը՝ Դիմողը փաստում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածին իրավակիրառ պրակտիկայում տրվել է այնպիսի մեկնաբանություն, որի արդյունքում պատշաճ կերպով քննության առարկա չի դարձել պարտապանի գրավոր առարկությունը, և դրա արդյունքում խախտվել են վերջինիս՝ օրենքի առջև համընդհանուր հավասարության և դատական պաշտպանության իրավունքները:

Դիմողը նշում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի նման մեկնաբանությունը իրավական անվտանգության և որոշակիության տեսանկյունից լուրջ ռիսկեր է առաջացնում իրավակիրառ պրակտիկայում:

Դիմողն ընդգծում է, որ թիվ ՍՆԴ/1247/04/21 սնանկության գործով վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից կայացվել է երկու դատական ակտ, որոնցով փաստվել է այն հանգամանքը, որ բանկի պահանջը հիմնավոր չէ, և անհրաժեշտ է պարտապանի առարկությունները պատշաճ քննության առնել, այդ թվում՝ պատշաճ քննության առնել փորձաքննություն նշանակելու մասին միջնորդությունը, մինչդեռ նույն գործով Սնանկության դատարանի և վերաքննիչ քաղաքացիական դատարանի վերջնական դատական ակտերում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածին տրվել է հակառակ մեկնաբանություն:

Դիմողը փաստում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը հակասում է նաև իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին այն իմաստով, որ չեն ապահովվում պահանջ ներկայացնելիս պարտատերերի գործողությունների կանխատեսելիությունը և իրավաչափությունը, և դրան զուգահեռ պարտապանը հնարավորություն չունի որոշակի կերպով իր վարքագիծը համապատասխանեցնել օրենքի կարգավորումներին, մասնավորապես՝ վիճարկվող օրենքը հնարավորություն չի ընձեռում պարտապանին «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի իրավակարգավորումների շրջանակներում վիճարկելու պարտատիրոջ անօրինական պահանջը և, առավել ևս, հնարավորություն չի ընձեռում կանխատեսելու, թե ինչպես քննության կառնվեն իր առարկությունները, որպեսզի, ըստ այդմ, իր վարքագիծը համապատասխանեցնի օրենքի կարգավորումներին:

Դիմողը գտնում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածն իրավակիրառ պրակտիկայում մեկնաբանվում և կիրառվում է Սահմանադրության 28-րդ հոդվածին, 61-րդ հոդվածի 1-ին մասին և 79-րդ հոդվածին հակասող մեկնաբանությամբ:

Ըստ Դիմողի՝ պարտապանի դատական պաշտպանության իրավունքի գործնականում արդյունավետ լինելու և պարտապանի՝ պարտատիրոջ հետ իրավունքների իրացման հարցում հավասար լինելու նպատակով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի

46-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի և կիրառվի այն մեկնաբանությամբ, որ պարտատիրոջ պահանջի չափը և օրինականությունը գնահատելիս դատարանները չպետք է ղեկավարվեն պահանջի հիմնավորված լինելու կանխավարկածով, և դրան զուգահեռ պարտապանի գրավոր առարկությունները պետք է քննության առարկա դառնան պատշաճ իրավական ընթացակարգի պայմաններում, այդ թվում՝ հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի վերաբերյալ պետք է նշանակվեն համապատասխան փորձաքննություններ:

Ամփոփելով՝ Դիմողը նշում է, որ բանկի կողմից որպես պահանջի օրինականությունը և չափը հիմնավորող ապացույցներ ներկայացվում են պարտքի վերաբերյալ քաղվածքներ և տեղեկանքներ, սակայն իրավակիրառ պրակտիկայում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը մեկնաբանվում է այն բովանդակությամբ, որ պարտապանը հնարավորություն չի ունենում արդյունավետ կերպով վիճարկելու այդ ապացույցները և դրանցում պարունակվող տեղեկությունները, այդ թվում՝ համապատասխան փորձաքննության միջոցով: Արդյունքում՝ Դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթի նման մեկնաբանությունը և կիրառությունը ոչ միայն հակասում են Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքին, այլև Սահմանադրության 63-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքին:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության*

2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերոհիշյալ նորմն իր ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, եթե դիմումում* ***առաջադրված հարցերը ենթակա չեն Սահմանադրական դատարանին:***

2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «*(…) բոլոր այն դեպքերում, երբ դիմողը,* ***ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ (…) որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:***

Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության առարկա կարող են դառնալ այնպիսի վեճեր, որոնց հիմքում դրված են **ոչ թե կոնկրետ գործի փաստական և (կամ) իրավական հանգամանքների գնահատման, վիճարկվող իրավական նորմի տվյալ գործով կիրառման կամ չկիրառման հարցեր, այլ վիճարկվող նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության գնահատման հարցեր**: Հակառակ դեպքում՝ տվյալ դիմումները չեն կարող ենթակա լինել Սահմանադրական դատարանին, քանի որ դուրս են Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:

Նորմատիվ իրավական ակտի դրույթի կիրառման իրավաչափության հարցի քննարկման պարագայում Սահմանադրական դատարանը կստանձնի դատական ակտ վերանայող դատական ատյանի գործառույթ, որը ոչ միայն չի բխի Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի

կարգավորումներից, այլև փաստացի կվերացնի Սահմանադրական դատարանի և եռաստիճան դատական համակարգում գործող դատարանների գործառույթների տարանջատումը:

Այսինքն՝ Սահմանադրական դատարանում քննության առարկա կարող է լինել բացառապես նորմատիվ ակտի, ինչպես նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականության գնահատումը:

Քննարկվող համատեքստում հաշվի առնելով Դիմողի ներկայացրած դիրքորոշումները և հիմնավորումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերջինիս կողմից բարձրացվել է այնպիսի հարց, որը **ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը**՝ հետևյալ պատճառաբանությամբ.

գործի նյութերի ուսումնասիրությունը վկայում է, որ սույն անհատական դիմումով Դիմողը, ձևականորեն վիճարկելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը, ըստ էության, **բարձրացնում է տվյալ դրույթի կիրառման իրավաչափության հարց**:

Այսպես՝ Դիմողն իր անհատական դիմումով ներկայացրել է դիրքորոշում առ այն, որ *«Տվյալ պարագայում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածին իրավակիրառ պրակտիկայում **տրվել է այնպիսի մեկնաբանություն, որի արդյունքում պատշաճ կերպով քննության առարկա չի դարձել պարտապանի գրավոր առարկությունը** և դրա արդյունքում խախտվել է վերջինիս՝ օրենքի առջև հավասար լինելու, ինչպես նաև արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը»:*

Դիմողը նաև նշել է, որ *«(...) թիվ ՍՆԴ/1247/04/21 սնանկության գործով վերաքննիչ դատարանի կողմից կայացվել են թվով երկու դատական ակտեր, որոնցով փաստվել է այն հանգամանքը, որ բանկի պահանջը հիմնավոր չէ և անհրաժեշտ է պարտապանի առարկությունները պատշաճ քննության առնել, այդ թվում՝ պատշաճ քննության առնել փորձաքննություն նշանակելու միջնորդությունը, այնինչ նույն գործով սնանկության դատարանի և վերաքննիչ դատարանի վերջնական դատական ակտերում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածին տրվել է հակառակ մեկնաբանություն»:*

Բացի դրանից, Դիմողը վկայակոչել է պնդում առ այն, որ *«Տվյալ պարագայում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը հակասում է նաև իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին, այն իմաստով, որ չի ապահովվում պահանջ ներկայացնելիս պարտատերերի գործողությունների կանխատեսելիությունը և իրավաչափությունը և դրան զուգահեռ պարտապանը հնարավորություն չունի որոշակի կերպով իր վարքագիծը համապատասխանեցնել օրենքի կարգավորումների հետ, մասնավորապես վիճարկվող օրենքը հնարավորություն չի ընձեռում պարտապանին «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի իրավակարգավորումների շրջանակներում վիճարկել պարտատիրոջ անօրինական պահանջը և առավել ևս հնարավորություն չի ընձեռում կանխատեսել, թե ինչպես քննության կառնվեն իր առարկությունները, որպեսզի ըստ այդմ իր վարքագիծը համապատասխանեցնի օրենքի կարգավորումների հետ»:*

Միաժամանակ, Դիմողը նշել է, որ*«(...) «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը իրավակիրառ պրակտիկայում մեկնաբանվում և կիրառվում է ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածին, 61-րդ հոդվածի 1-ին մասին և 79-րդ հոդվածին հակասող մեկնաբանությամբ և ըստ այդմ դիմողը գտնում է, որ որպեսզի պարտապանի դատական պաշտպանության իրավունքը լինի գործնականում արդյունավետ և որպեսզի պարտապանը պարտատիրոջ հետ իրավունքների իրացման հարցում լինի հավասար, ապա «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը պետք է մեկնաբանվի և կիրառվի այն մեկնաբանությամբ, որ պարտատիրոջ պահանջի չափը և օրինականությունը գնահատելիս դատարանները չպետք է ղեկավարվեն պահանջի հիմնավորված լինելու կանխավարկածով, և դրան զուգահեռ պարտապանի գրավոր առարկությունները պետք է քննության առարկա դառնան պատշաճ իրավական ընթացակարգի պայմաններում, այդ թվում՝ հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի վերաբերյալ պետք է նշանակվեն համապատասխան փորձաքննություններ»:*

Վերոգրյալը Սահմանադրական դատարանին հիմք է տալիս եզրահանգելու, որ սույն անհատական դիմումով Դիմողը, ըստ էության, **իր անհամաձայնությունն է հայտնում թիվ ՍՆԴ/1247/04/21 սնանկության գործով վերաքննիչ քաղաքացիա-**

կան դատարանի կողմից կայացված դատական ակտի բովանդակությանը: Մասնավորապես՝ **Դիմողը վիճարկվող դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության հակասահմանադրականության որևէ հիմնավոր փաստարկ չի ներկայացնում,** իսկ որպես փաստարկ ներկայացվող դիրքորոշումներն առավելապես վերաբերում են **ՀՀ դատարանների, մասնավորապես՝ վերաքննիչ քաղաքացիական դատարանի գործողությունների (կայացրած դատական ակտի) իրավաչափությանը:**

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանը եզրակացնում է, որ սույն պարագայում **Դիմողը, ձևականորեն վիճարկելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության սահմանադրականությունը, ըստ էության, բարձրացնում է տվյալ դրույթի կիրառման իրավաչափության հարց:**

Ելնելով ողջ վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն դիմումով Դիմողի կողմից բարձրացված հարցի ըստ էության քննությունը ենթադրում է Սահմանադրական դատարանի կողմից ոչ թե վիճարկվող դրույթի սահմանադրականության գնահատում, այլ թիվ ՍՆԴ/1247/04/21 սնանկության գործով վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած դատական ակտի իրավաչափության ստուգում, որը դուրս է Սահմանադրական դատարանի իրավասության շրջանակից:

Ուստի՝ հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը **ենթակա է մերժման՝ դիմումում առաջադրված հարցի՝ Սահմանադրական դատարանին ենթակա չլինելու հիմքով:**

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Արտակ Բաղինյանի դիմումի հիման վրա՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

4 հուլիսի 2023 թվականի
ՍԴԱՈ-77